

րատուութեանց համար, և ստէպ ժամացուցին նայեն, և գէպ ի դուակը և դուռը շտապեն. այլ ուսումնատուութեան հետ միասին ճիշդ և մտադիւր ուշադրութիւն ունենան աշակերտեալ մանկանց առողջութեան վերայ, և չոլաշանջեն նոցանէ նոցա մտաւոր և փիղիքական կարողութենէն վեր մտաւոր գործունէութիւն, որովհետեւ մեր ազգային յառաջադիմութեան համար հարկաւոր են առոյգ և զուարթամիտ բարեկիրթ հայեր, և ոչ անշունչ դիակունք կամ դիակնացեալ շնչաւորք. Հայարնակ գաւառաց գամբարանք լի են կմախովք զոհից, զորս անզմութեամբ և անզիտութեամբ այն տեղերքը շտեմարանել են դարք գառնութեանց:

Այս ամենը ես քաղելով Հիւսիսափայլէն, Մասիսէն, Արարատեան Արշալուսէն, Համբաւարերէն, Մասեաց Աղաւնիէն, Արարատէն Էջմիածնի, Կոռունէն, Մեղուէն, Հայկական Աշխարհէն և Արևմուտքէն, առայժմ միայն այսքանը որպէս մէկ փոքրիկ փնջակ ծաղկանց կնուիրեմ իմ հայրենակցաց, որ նոքա այս ընթեռնլով՝ ճանաչեն իւրեանց երախտապարտութիւնը այն հանդիսութեանց, և լիարերան հատուցանեն իւրեանց գոհութիւնը նոցա բարեմիտ հեղինակաց:

Հեղինակ Իրաւականութիւններ Դարձիւութեանց և Աշհագնի Գողացիւթեանց ՅԱշշալուսն Երաշտուան և Աշամունը՝ է Օդունիտ, և Զորից Եղանակաց և Հրաժելունի Աշորդանայ՝ է լոյս ընծայելոց Յօրացոյց և յԱշտարակն Ա. Խջիտանի:

ՕԴԻ ՄԸ ՔԲՐՈՒՄՆ:

Մեր կեանքը պահպանելու համար հարկաւոր է ոչ միայն սնունդը, այլ կարեւոր է նոյնպէս և օդը: Որչափ բարեհամ ճաշ ևս վայելինք, այնու ամենայնիւ օդուտ չէր լինի մեզ, եթէ մի վայրկեանով անգամ արգելք առաջանար օդի աղատաբար մտնելուն մեր թոքերի մէջ,

Կատերը մինչև անգամ շատ լաւ զիտեն տեսականաբար թէ ինչպէս կարեւոր է օդը և պատրաստ են մտաներով համարել թէ օրը որչափ թթուածին պահանջվումէ հասակաւոր մարդի կանոնաւոր շնչառութեան համար: Բայց գործառնաբար նոքայամախ մոռանումեն հասարակը լինդ համրածանօթ տարբերութիւնը ճառագութ օդի և ցուրտ օդի մէջ: Մեծ մասը զիտէ իհարկէ թէ ինչէնշանակում “զուարթ”, օդի: Զուարթ օդը նա է, որը աւելի ունի թթուածին իւր մէջ: Պարզ ասեմ: շնչառութեան համար մեզ հարկաւոր է ոչ թէ օդը, այլ մեզ հարկաւոր է թթուածինը: Այս խօսքից յետոյ բաւական օտարութիւնի խառնել “զուարթ”, օդը “ցուրտ”, օդի հետ, ոչ ապաքէն թթուածնով հարուստ օդը միենոյն ժամանակ կարօղ է շատ տաք լինել, ինչպէս և միւս կողմից ցուրտ օդը կարօղ է թթուածնով չքառոր լինել:

Լուսաւորվածներից անգամ շատերը դեռ ևս չգիտեն զանազանել և խառնում են այս երկու բոլորովին այլասեռ իրեր: Եթէ խառնօղներն չլինեն, հապա ովլ շնչել կտար մեր բնակարանների մէջ, — և մանաւանդ հիւնադանոցների և սահմանների մէջ, — առանց օդափոխի պատուհաններ, կամ թէ որ բոլորովին միենոյն է, այնպիսի օդափոխներով պատուհաններ, որ երբ դուք կամենում էքնոցանից օդուտ քաղել ձմեռը (տարվան այն եղանակին, երբ նոքա մանաւանդ կարեւոր են դառնում), մաքուր օդի հետներս է մտնում սենեակը զարհուրելի ցուրտը: Ոչ ապաքէն տղեաներն չեն շնչում այս աները, այս հիւանդանոցները, այս ու-

սումնարանները։ Ըինութիւնը կառավարում էն առ հասարակ ամեն տեղ այնպիսի մարդիկ, որոնք համարում են իւրանց բոլորովին լուսաւորված և քաջ իմացօղ, թէ օդը բաղկացած է թթուածնից և աղօտից (անկիզելի մասից), և թէ թթուածինն է որ աշա այնչափ կարեոր է մեզ շնչառութեան համար։ Բայց ընայելով սորան, երբ գործը շնութեանն կհասնէ, նոքա այնու ամենայնիւ կշինեն պատուհաններ կամ բոլորովին առանց օդափոխների կամ թէ ցջը հեղեղային ձեի օդափոխներով։


Թթուածնի կարեորութիւնը մենք այն ժամանակ միայն կհասկանանք, եթէ կը մտարերենք, որ բոլոր մեր կեանքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ - թթուելու կամ այրման արտադրութիւն։ Անը ստորին կամ Փիզիքական կեանքը այն է, որ մեր մարմի մէջ մտնող սննդի բաղադրեալ մասները փոքր առ փոքր թթուում են այսինքն միանում են քիմիարար թթուածնի հետ և վերջապէս թթուելու բարձր աստիճանին, թթուածնով յագենալուն հասնելով, արդէն այնպիսի մարմիններ են գոյացնում, որոնք այլ ևս նորէն թթուելու, ուրեմն և մեր կենսական արտադրութիւնն պահպանելու ընդունակութիւն չունին (ջուր, ածխային թթուատ, ամիմաք)։ Այսպիսի մարմինները բաժանվում են կազմուածքից իրր անպիտան, և միանում են մեծ մասամբ մթնոլորդային օդին։ Այսպիսի եթէ այս մարմինները անօգուտ են մարդիկների և անասունների համար, նոքա չափազանց օդափոխ են բոյսերին, որոնք կլանում են նոցա ագահութեամբ և որոնց համար սրնունդ են դառնում։ Որպանից պարզ ե-

րեումէ մարդիկներից և անասուններից պարապած ծածկված տեղերի սակաւ առ սակաւ վնասակար դարձօղ օդի յատկութիւնը. իեանքը պահպանելու համար անպիտան նիւթերը հաւաքվում են հետզետէ, այն ինչ թթուածնի քանակութիւնը պակասումէ։ Կայն փաստով պարզ մեկնավումէ և այն երեսոյթը, որ բոյսերը (պարտէզներ, անտառներ) մաքրում են օդը։ Աւստի ապացուցանվումէ օդափոխման կարեւորութիւնը։ Եթէ մեզ հարկաւոր լինէր օդը միայն և եթէ, այն ժամանակ առանձին կարիք չէր լինի օդը մաքրելու։ Բայց որովհետեւ մեզ պէտք է ոչ թէ օդը, այլ թթուածնինը, ուստի հարկաւոր է մաքրել օդը, մանաւանդ եթէ հաշուի տակ ձգելու լինինք մեր ծրագավառութեան եղանակները, որ բաւական կլանում են թթուածնն և առաւել ևս ծխախոտի գործածութիւնը, որ այսչափ տարածված է ամեն տեղ մեծերի և փոքրերի մէջ, աշխարհականների և հոգեորականների մէջ և որը սենեակի օդը չափազանց մնասակար է շինում։ Արդարեւ օդափոխման կարելի է կերպով իմն փոխարինել բացօգեայ զբօսանքներով, բայց 24 ժամ զբօսնելն յարմար չէ լինում միշտ։ Խսկ մի կամ երկու ժամեայ զբօսանքը ոչինչ չի նշանակի, եթէ այնուհետեւ 20 ժամ աւելի պիտի մնաք փակված վատ օդի մէջ։ Կարօղ է մի՛թէ ոք մին մտածել թէ նա հարստանալու է, հարիւր մանէթ եկամուտ ստանալով և հաղարը ծախսելով։ Բայց մենք խսկ այսպէս ենք մտածում, երեակայելով թէ պահպանում ենք մեր առողջութիւնը երկժամեայ զբօսանքով։ Խսկ քացախ ծխել, խլօրային կիրեր, օդը կօլոններ, արքայական փոշներ,

զանազան հիւթեր ելն ելն, նոքա ամենելին չեն մաքրում օդը, և այսպէս մտածօղներն շատ սխալվումեն հաշուի մէջ . այս հնարներով ստացած բոլոր հետեւանքը այն է, որ մենք մի անախորժ հոտը ուրիշ հոտով ենք խափանում: **Օքիծաղելի կլինէր,** եթէ ոք մին երեւակայէր թէ նա ազատվումէ վնասակար օդի ազգեցութենից հոտաւեխւղեր ածելով իւր վերա. նա կազատվէր միայն վատ հոտ առնելուց, և ոչինչ աւելի: **Միակ,** ոչ երեւակայական, այլ իրական հնարը բնակարանների օդը մաքրելու համար օդափոխումն է:

Օդափոխման եղանակը կարօղ է զանազան լինել, նոյելով թէ որ չափ է զանազան վում արտաքին օդը ներքին օդից: **Երբ** արտաքին օդը զանազան վում չէ,

կամ թէ շատ սակաւ է զանազան վում ներքին օդից, ինչպէս որ լինումէ բարեխառն կլիմայի մէջ ընդհանրապէս գարնան, ամառը և աշնան, այն ժամանակ օդը փոխումն պատուհաններ միայն բանալով, և երբեմն դռներն եւս: **Ի՞այց** օդափոխման այս եղանակը, չնայելով իւր անարուեստութեան և յարմարութեան, նպատակին չէ համում: **Ահա ինչի:** **Այստեղ կարօղ է երկու դէպք լինել.** արտաքին օդը սենեակի օդից կամ աւելի տաք կարօղ է լինել կամ աւելի ցուրտ: **Կախի վերցնենք** առաջին դէպքը, որ կարելի է ամառվան տաք օրերին: **Չետագայ** պատիկը պարզ ցոյց է տալիս, որ օդի այս տեսակ մաքրումըն նոյնպէս երեւակայական, և ոչ իրական համարելու է:



Պատիկ. ա

Ջիղեկայի օրէնքներով յայտնի է, որ ցուրտ օդը տաք օդից աւելի ծանր է, ուստի ցուրտ օդը ձգտումէ ներքեւ, իսկ տաքը վերև: **Ի՞այց** մոռանալ չէ հարկաւոր, որ այսպիսի շարժօղութիւնը կպատահի այն

ժամանակ միայն, երբ ցուրտ օդը տաք օդից վը կամ նորան հաւասար զիրքով կղըտնվի: Խոկ եթէ ցուրտ օդը տաք օդից վար կլինի, հասկանալի է որ երկուքն եւս հանգիստ կմնան: **Դիցուք թէ արտաքին օդը**

սենեակի օդից աւելի տաք է, նաև այն-
տեղ, որտեղ նա սենեակի օդից վար է
գտնվում: Ուստի սենեակի օդը, ինչպէս
ցոյց է տալիս ցուցակների ուղղութիւնը,
կսկսէ դուրս գնալ առ պատուհանի վարի մա-
սով է կէտի մօտով: Կորա տեղ կսկսէ մանել
սենեակի մեջ արտաքին տաք օդը պատու-
հանի վերին մասով առ կէտի մօտով: Այս
կերպով սակաւ առ սակաւ օդը կմաքրվէ
սենեակի վերին մասի մեջ: Խսկ ստորին
բժիշտ մասի մեջ օդը առաջվան պէս անմա-
քուր կմնայ, որովհետեւ նա վերին օդից ա-
ւելի ցուրտ է և ծանր, ուստի անշարժ կը-
մնայ, ինչպէս ջուրը լողարանի մի մեջ: Եւ
այս անշարժութիւնը մեծ վնաս պիտի
հասցնէ սենեակի բնակիչներին: Վնասը
նոյնքան նշանաւոր կլինի, որքան մեծ է տա-
րածութիւն պատուհանի և յատակի մեջ,
որովհետեւ այս գէպքում նոյնչափ մեծ
է լինում անշարժ օդի տարածութիւնը:
Խրաւ է որ մեծ մասամբ շնչառութեան
զործիքի արտաքին մասը այսինքն քթափո-
ղերը այս տարածութենից դուրս կլինին,
բայց այն ժամանակ միայն, քանի որ պա-
տուհանը բաց է և մարդս քնած չէ: Խսկ զի-
շերով քնի մեջ, երբ մաքուր օդը ամենա-
կարեոր է, մաշճակալի վերս պառկած
մարդը, եթէ պատուհանն ևս բաց լինէր,
այնու ամենայնիւ բժիշտ տարածութեան
ապականված, անմաքուր օդ կծծէ: Բայց
ոտի վերա կանգնած մարդն ևս, որ կարծու-
մէ թէ այս տեսակ օդափոխմամբ սենեակի
օդը բաւական զուարթացած պիտի լինի,
լաւագոյն պայմանի մեջ չի լինի, երբ պա-
տուհանը կիսակի: Արտաքին օդի հօսանքը
կդադարէ և ներքին օդը կսկսէ խառնվել:
Վերին տաք օդը փոքր ինչ վար կգայ,


վարինը աւելի ցուրտ օդը կտաքանայ և կը-
բարձրանայ: Արանից հին անմաքուր օդը
կիսաչափ կիսանվի մաքուր օդի հետ և
սենեակի օդը կդառնայ ոչ առաջնի չափ
վնասակար, և ոչ արտաքին օդի չափ մա-
քուր: Այսպիսի դէպքում տուաւել լաւ
է յաձախ բանալ պատուհանը փոքր ժա-
մանակով քան թէ մի կամ երկու անգամ
երկար ժամանակով բանալ: Պարզ բան
է, որ որքան երկար բաց մնալու ևս լինէր
պատուհանը, պատուհանից վար եղած
բժիշտ տարածութեան օդը իւր տեղը
կմնայ, այն ինչ պատուհանի ամեն նոր
բանալիս օդի մի մասը դուրս կնգայ:

Օդափոխման այս սովորական եղանա-
կի փոխանակ առաւել նպատակայարմար է
հետեւեալ եղանակը:

Պատուհանը հանգիստ թողնելով և
սենեակը լուսաւորելու համար միայն գոր-
ծածելով, օդափոխման համար սենեակի
մի պատի մեջ երկու ծակ կամ բերան են
շնչում, մինն անմիջապէս առաստաղի
տակ, միւսը է անմիջապէս յատակի վերա:
Երկու բերաններն ևս սողնակներով փա-
կելի են: (Պատիւը բարձր է:)

Երբ կամենում են սենեակի օդը մաքրել
երկու բերաններն միասին բանում են: Ինչ
պէս ցոյց են տալիս ցուցակները — ներքին,
առաւել ցուրտ օդը, ըստ իւր համեմա-
տական ծանրութեան, կսկսէ վարի բե-
րանով դուրս գնալ, նորա տեղ, վերին
բերանով կսկսէ սենեակի մեջ զուարթ ար-
տաքին օդը մանել: Պարզ երեսում է, որ
այս կազմութեամբ սենեակի օդին ոչինչ
չէ արգելում մինչև վերջին հիւզը (ատօմ)՝
դուրս գնալ, որովհետեւ վարի բերանի և
յատակի մեջ ոչինչ միջնատեղ չկայ: Այս

Պատկեր 5




Հանգամանքը միւս կողմից հնարաւոր է անում արտաքին մաքուր օդի համար ևս բոլոր սենեակը լցնել։ Այս կերպով սենեակի օդը միանգամայն մաքրվումէ բոլորովին, և սա անկասկած մեծ օգուտ է։

Ա երին բերանը կարելի է ամեն ցանկացած տեղը զետեղել, թէև խորհուրդ կտայի, ինչպէս վերև ասվեցաւ, նոյն ինքն առաստաղի տակ շնչել։ Առա օգուտը

ակներեւ կլինի, եթէ քննենք երկրորդ դէպքը, երբ արտաքին օդը փոքր ինչ աւելի ցուրտ է սենեակի օդից, որ պատահումէ հասարակօրէն գարնան, ամառը և աշնան երեկոյից սկսած մինչև առաւօտը, իսկ երբեմն խառն անձրւային եղանակին, ցերեկով ևս։ Օդափոխման սովորական պայմաններով, այս դէպքում գործը յետագայ կերպով է կատարվում։

Պատկեր 6



Երտաքին, աւելի ցուրտ, ուրեմն և աւելի ծանր օդը, ինչպէս ցոյց են տալիս ցուցակ-ները և է կսկսէ սենեակը մանել պատուհանի վարի մասով, նեղելով սենեակի անմաքուր, առաւել տաք օդը, որը կսկսէ դուրս գնալ նոյն պատուհանի վերին մասով : Իսյց այսպիսի օդափոխումն կտարածվէ մինչև պատուհանի բարձրութիւնը միայն, մինչև է դ գիծը: Անացած բոլոր օդը, որ գտնվումէ պատուհանի ճակատից սկսած մինչև առաստաղը բարձր տարածութեան մէջ հանդիստ զրութեամբ կմնայ, որովհետեւ իւր տակ գտնվող օդից առաւել տաք է նա, ուստի կմնայ առանց մաքրվելու: Առաւել լաւ լինելու չէ ամենեին, եթէ դռներն բաց թողնենք, որովհետեւ դռներն երբէք առաստաղն չեն հանում, իսկ օդափոխման ազդեցութիւնը կարօղ է հասնել միմիայն մինչև բաց տեղի բարձրութիւնը: Առա մասին համոզվելու համար արժէ միայն, երբ բաց է պատուհանը, սենեակի մէջ սանդուղ դրնել և ձեռին ջերմաշափ ունենալով, բարձրանալ պատուհանի բարձրութենից վեր: Եթէ այս փորձը անօդն հարբուխ չունի, նորա քիթը և ջերմաշափը ճարտար կերպով կհամոզէն նորան որ նա ծծումէ այնտեղ դեռեւս առաջվան անմաքուր օդը: Ուրեմն որքան ժամանակ ևս բաց լիներ պատուհանը, օդի մի մասը սենեակի մէջ միշտ անմաքուր կմնայ, և այս մի մասը այնքան աւելի կլինի ի հարկէ, որքան աւելի է պատուհանի և առաստաղի մէջ եղած տարածութիւնը: Եթէ պատուհանները բաւական բարձր են, այն ժամանակ երբ նոքա բաց են, մենք կարօղ ենք դեռ օդա-


փոխման բարերել ներգործութենից շահվել: Իսյց այս տեսակ օդափոխման բոլոր ներգործութիւնը մենք կզգանք, պատուհանները փակելուց յետ: Եւ այս աններգործականութիւնը առաւել զդալի կլինի հարուստների բարձր պալատների մէջ, որտեղ պատուհանի բացվող մասի և առաստաղի մէջ չեռաւորութիւնը անհամեմատ աւելի է լինում քան թէ շնչականի խրձթի մի մէջ: Երբ այսպիսի օդափոխումից յետոյ մենք պատուհանը կփակենք, այն ժամանակը սենեակի վարի մասին զուարթ օդը զանազան պատճառներով (մարդիկների շնչառութեան, ճրագավառութեան և ուրիշ պատճառներով) կսկսէ տաքանալ և բարձրանալ, իսկ վերին անմաքուր օդը, համեմատաբար առաջվանից առաւել ծանր դառնալով, կսկսէ վար գալ, այնպէս որ փոքր ինչ ժամանակակից յետոյ առաջվան վնասակար օդը նորէն սենեակի վարի տարածութիւնը կը բռնէ, թէեւ խառնվելով նոր զուարթ օդի հետ: Այստեղ որտեղ պատուհանները սակաւ են հեռացած առաստաղից (օրինակ շնչականների խրձիթների մէջ) առաջվան օդի աննշան մնացորդի պատճառով նորա խառնուրդը սակաւ կլինի զդալի: Քոլորովին հակառակն կլինի արիստօկրատական (մեծատների) բարձր դաշնիների մէջ, որտեղ սենեակի մեծութեանն համեմատելով, պատուհանի բացվող մասի շնչին բարձրութեան պատճառով, անմաքուր կմնայ սենեակի օդի դրեթէ երեք քառորդը: Առանից յետոյ կարելի է դատել թէ որչափ մէծ կլինի այնպիսի օդափոխման հետեանքը, երբ պատուհանը

կփակենք և երբ առաջվան վեառակար օղի էրեւ +առարդը կիսառնվի նոր զուարթ օղի մէ +առարդէ հետ:

Կիսառելու է որ այսաեղ, ինչպէս և նախընթաց դէպքում, առաւել օգտաւէտ է յաճախ բանալ և յետոյ նորէն փակել պա-

տուհանը քան թէ բաց թողնել նորաներկար ժամանակով, թէև ամբողջ օրով: Պատճառը նոյն է ինչ որ առաջին դէպքում: Եյս երկրորդ դէպքում վերև առաջդրված օդափոխման եղանակը միենայն արտօնութիւններ ունի, ինչպէս կերեի յետագայ պատկերից:

Պատկ. Դ.



Եյստեղ, ինչպէս և նախընթաց դէպքում, մի պատի մէջ երկու ծակ կամ բերան են շնուռմ. մին առ առաստաղի տակ անմիջապէս, միւսը է անմիջապէս յատակի վերա: Ինչ մինն և թէ միւսը ներսից սողնակով են փակվում: Երբ որ հարկաւոր է սենեակի օդը փոխել, երկոքեան բերանները, ինչպէս և առաջին դէպքում, միաժամանակ են բացվում: Յուցակների ուղղութիւնը ցոյց է տալիս, որ արտաքին օդը, որ աւելի ցուրտ է, կսկսէ նեղել սենեակի օդը ներքեից, սենեակի օդը կսկսէ դուրս գնալ վերին բերանով, իսկ արտաքին օդը կմտնէ վարի բերանով: Պարզ

բան է, որ այս կերպով բոլոր սենեակը կցվի զուարթ օդով: Խօնչի: «Նորա համար իսկ, որ մենք ամենեին ոչինչ տեղ չթողնիք առաստաղի և վերին բերանի մէջ, եթէ ոչ նոյնը կլինէր ինչ որ լինումէ պատուհանների միջնորդութեամբ օդ նորոգելու ժամանակ:»

Ենմիջապէս յատակի վերա բերան շինելն նախամեծարելի է նորա համար, որ սա պիտանի է լինում առաջին դէպքին ևս, երբ արտաքին օդը ներքեին օդից աւելի տաք է:

Աւելմն այս շատ հասարակ կազմութիւնը — սողնակներով ծածկվող երկու բերաններ, մինն նոյն ինքն առաստաղի տակ,

միւսը անմիջապէս յատակի վերա, — կարօղ է շատ լաւ ծառայել ամեն տեսակ բնակարանների օդափոխման համար տարվան մեծ մասը այն է գարնան, ամառը և աշնան թէ դիշեր և թէ ցերեկ:

Խորհուրդ եմ տալիս այս ի նկատի ունենալ այն պարզներին, որոնց հարկ է գիտենալ, մանաւանդ նոցա, որոնց ձեռին են ուսումնարանների, կրթօղական աների, հիւանդանոցների և ուրիշ շնութիւնները: Կարծումեմ թէ խնդիրը արժէ որ նոքա իւրանց բարձր ուշք դարձնեն սրան:

Ինձ մնումէ դարձեալ քննել օդափոխման եղանակը այն դէպքում, երբ արտաքին և ներքին օդի մէջ նշանաւոր տարրերութիւն կայ, որ լինումէ ձմեռը: Իսկ որովհետեւ օդափոխումն այս դէպքում կապակցութիւն է ստանում տուն տաքացնելու խնդրի հետ, ուստի այս խնդրի մասին միւս անգամ առանձին կիսում:

Ո. Առենանէ:

ԶԵՓԻՒԹ ՀԱՅՐԵՆԻ:

Մինչդեռ Արշալոյս ոսկեայ իւր գունով
‘Նոր եր զարդարել թէ գաշտ՝ թէ ձորեր,
Զեփիւռն կը հնչէր նոցա վերայով,
Որ կեանք աշխարհին կարծես կսիռէր:
Սրտիկս լցուած յայնժամ բիւր ցաւով
Կապուտակ երկնից աստեղց պէս անթիւ,
Հազարմէկ խոկմունք պէսպէս մոքերով,
Կանցնէին, կանցնեն, չկայ սոցա գին:
Խեղչիս աչքերէն արցունքներ շեմեր
Վաղելով լոիկ թարգման խոր ցաւիս,

Տիսուր ու տրտում անցեալ պատկերներ,
Բերէր իմ հանդէպ, բաղտաղուրկ ազգիս:
Ո քաղցրիկ զեփիւռ, օտարին գարուն,
Քանզի պատել է նոցա փառաց շուք,
Եսկ ապաբաղդիս սիրտն է լի արիւն.
Ուր միայն տիրէ ձմռան ցուրտ ու բուք:
ՎՃիս քաղցրահամ ու սառն աղբիւրներ
Խոխոջան, սահեն գէպ սիրուն դաշտեր,
Մանիշակ, շուշան, վարդենիք, սօսիք,
Թո՞ղ գու այս պատկեր, զեփիւռ քաղրասիգ,
Անցիր ու գնա շուտով Ծաւարշան,
Սուրբ են այս տեղի ծաղիկ ու գիտին.
Քանզի պահուած են քաջեր Հայկական,
Ի սէր Եզզութեան և ուրբ Կրօնին:
Սփուէ կենսատու քոյ անուշիկ հով,
Ուստի պիտ ծաղին անմահ Վարդաններ,
Տուր նոցա կիղուած սրտից անուշ զով,
Որոց կենդանի մնան անուններ:
Եյն տեղ և Տղմուտ հեղիկ սահանքով
Սահի, ընթանայ թաւալի յառաջ,
Տիսուր ծփակդէն աղեկէլ ձայնով
Անմահ քաջեր կելին բիւր թաւաչ:
Երբ գու յանմուաց Հայկեան յիշատակ—
Յևեարայր համանիս, զեփիւռ իմ քաղցրիկ,
Այրի Տղմուտին մինչդեռ անիօսնակ
Երեսովն անցնիս ալեաց մէջ լոիկ.
Տուր գու իմ համբոյր, համբոյր ըղձարուդիս,
Ուր քաջաց արիւն թողու գեռ նշան.
Ուր սուրբ քաջ Վարդան պսակն յիւր զլուխ
Նայէ Հայերուն ու գէպ Ծաւարշան
Սօսեաց զեղատես թուփերու մջէն
Հնչէ երգաձայն Զեփիւռ իմ սիրուն,
Հնչէ Հայ քաջաց շիրմաց վերայէն.
Հնչէ իմ հոգեակ՝ իմ սէր սիրասուն:
Այրպէս անհամար յիշատակ քաջաց
Են, որ խոցուտեն զիմ սիրտ խոր ի խոր,
Գնա գու Զեփիւռ, Զեփիւռ հայրենեաց
Հայոց սփոփել սրտեր սզաւոր:

ՅԱՀԱՆԱՆԷ ԱՐԵՎԵԿԱՆԱԳ